Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 150

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ – ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ

(ծածկագիր 2.3-305)

ա) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովմանը.

բ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում և վարում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգ, համագործակցում նմանատիպ այլ համակարգեր սպասարկող կազմակերպությունների հետ.

գ) բաժնի պետի հանձնարարությամբ պլանավորում և կազմակերպում է երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման ծրագրերի իրականացումը և խնդրի վերաբերյալ բարձրացնում հասարակության իրազեկվածությունը.

դ) բաժնի պետին ներկայացնում է որդեգրել ցանկացող, Երևան քաղաքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուց ստացված դիմումի և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև նրա կենսապայմանների և ծնողավարման հմտությունների ուսումնասիրության ակտի հիման վրա որդեգրման հնարավորության մասին եզրակացություն.

ե) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է որդեգրման ենթակա երեխաների հաշվառումը, լրացնում է նրանց անձնական քարտերը, կազմում է որդեգրման ենթակա երեխայի անձնական գործ և հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում անձնական գործի պատճենահանված օրինակն ուղարկում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն)՝ կենտրոնացված հաշվառման նպատակով.

զ) բաժնի պետի հանձնարարությամբ խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձի դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կատարում է այդ անձի կենսապայմանների և ծնողավարման հմտությունների ուսումնասիրություն, կազմում համապատասխան ակտ և 5-օրյա ժամկետում տալիս է խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին եզրակացություն.

է) բաժնի պետի հանձնարարությամբ կազմակերպում է կրթությունից դուրս մնացած կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի սոցիալական պաշտպանությունը.

ը) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի եզրակացության և ծնողի դիմումի հիման վրա կազմակերպվող երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման գործընթացին.

թ) բաժնի պետի հանձնարարությամբ աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը՝ դրանց բացակայության դեպքերում.

ժ) բաժնի պետին ներկայացնում է Երևան քաղաքում հայտնաբերված մարդկանց և երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի վերաբերյալ տեղեկատվությունը.

ժա) սուպերվիզիա է իրականացնում բարդ դեպքերի վարման և աշխատանքային գործունեության ընթացքում ծագած խնդիրների լուծման դեպքում, տրամադրում մասնագիտական խորհրդատվություն.

ժբ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.

ժգ) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

ժդ) անհրաժեշտության դեպքում՝ բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

ժե) կազմում է բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

ժզ) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.

ժէ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ և սոցիալական աշխատանքի մասնագիտությունից բխող այլ պարտականություններ:

Բաժնի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատողն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մասնագիտության էթիկական սկզբունքներից բխող այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի /092301.00.6; 092301.00.7/ սոցիալական աշխատանք մասնագիտությամբ բարձրագույն կրթություն կամ այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն և «սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներն ավարտելու վերաբերյալ համապատասխան վկայական և սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա ստաժ, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

բ) ունի ընտանեկան օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Սոցիալական աջակցության մասին» օրենքների, աշխատակազմի և վարչության կանոնադրությունների ու իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է խոցելի խմբերի երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և այլ գենդերային ու սոցիալական խոցելի խմբերի (նրանց ընտանիքների) հիմնախնդիրներին, նրանց հետ սոցիալական աշխատանքի մեթոդներին ու տեխնիկաներին, ինչպես նաև դեպքի վարման մեթոդաբանությանը, կարողանում է կիրառել պաշտպանության կարիք ունեցող երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդներն ու տեխնիկաները, տեղեկացված է նշված կարիքների բավարարման, միջամտության պլանների իրագործման համար առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքերիի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների (մասնակիցներիցմեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2022 թվականի հուլիսի 11-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարողեն դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010-515131):

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ